

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 05.10.2020թ. թիվ 2011708262 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<26>> 10 2020թ. 7-13- 13557

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արմենակ Ասլանյանի ՄԴ/145449-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան փողոցի 33 շենքի 12 բնակարանի բնակիչ Արմենակ Ասլանյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011708262 որոշումը՝ նշելով, որ առաքիչ է կատարել է առաքում:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի փաստարկը չի կարող վարչական ակտը բեկանելու հիմք հանդիսանալ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. № 955-Ն որոշման համաձայն՝ 3.1 «Մուտքն արգելվում է» ճանապարհային նշանն արգելում է տրանսպորտային միջոցների մուտքը տվյալ ուղղությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, **երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:**

Վիճարկվող որոշման իրավախախտման PIN անհատական ծածկագրի տակ գետեղված տեսանյութի դրվագային ուսումնասիրմամբ պարզվել է, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 19.09.2020թ. ժամը՝ 12:03-ին Երևան քաղաքի Թամանյան-Իսահակյան փողոցների խաչմերուկի հատվածում մուտք է գործել «Մուտքն արգելվում է» ճանապարհային նշանով կահավորված փողոց: Տեսանյութը փաստում է նաև, որ արարքը չի կատարվել երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով, հետևաբար վերը նշված ավտոմոբիլի վարորդը թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք:

Հարկ է նշել, որ տեղադրված 3.1՝ «Մուտքն արգելվում է» ճանապարհային նշանը և 8.5.4՝ «Գործողության ժամանակ»>ցուցանակը արգելում են մուտքը տվյալ ճանապարհի ժամը 11:00-ից մինչև 24:00-ն:

Այսպիսով, հիմնավորվել է, որ վերը նշված որոշումը իրավաչափ է և օրինական:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ»>> օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 05.10.2020թ. թիվ 2011708262 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արմենակ Ասլանյանին:



Ե. Կարապետյան